



Մ ՈՒՐԲ Յ ԱԿՈՐ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ Ե ԿԵՂԵՅԻ



ՅԱՐՈՒԹԵԱՆԷՆ ԵՏԲ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԿԻՐԱԿԻ

17 ՄԱՅԻՍ 2009

Կիրակնօրեայ ընթերցումներ	Էջ 1
Ձոնանդներում եւ Տնանդներում Մասիմ	Էջ 2
Ամէն Ինչ Ձգել	Էջ 4
Ծանուցում	Էջ 8

ԸՆԹԵՐՑՈՒՄ
«ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒՆ ԳՈՐԾԵՐԸ»
ԳԻՐՔԷՆ
(20.17-38)

Միլետոսէն Պօղոս լուր զրկեց Եփեսոս եւ եկեղեցւոյ երէցները իր քով կանչեց: Երբ անոնք եկան, ըսաւ անոնց.

« Դուք անձամբ գիտէք թէ Ասիա գալուստ առաջին օրէն ի վեր ի՛նչպէս վարուեցայ ձեզի հետ, ամբողջ այս ժամանակամիջոցին: Ամենայն խոնարհութեամբ եւ յաճախ արցունքով ծառայեցի Աստուծոյ, հրեաներու նիւթած բոլոր փորձութիւնները կրելով: Գիտէք թէ բնաւ չքաշուեցայ ձեզմէ, օգտակար բաներու մասին խօսեցայ եւ սորվեցուցի ձեզի, հրապարակաւ ըլլայ թէ տան մէջ: Թէ՛ հրեաներուն եւ թէ՛ հեթանոսներուն տուի նոյն վկայութիւնը եւ պատգամը՝ ապաշխարութեամբ Աստուծոյ դառնալու եւ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի հաւատալու:

« Հիմա, ահաւասիկ, Սուրբ Հոգիին մղումով Երուսաղէմ կ'երթամ: Ձեմ գիտեր թէ հոն ի՛նչ պիտի պատահի ինծի: Միայն գիտեմ թէ ամէն մէկ քաղաքի մէջ Սուրբ Հոգին կ'ազդարարէ ինծի՝ ըսելով թէ բանտարկութիւն եւ նեղութիւն կը սպասեն ինծի: Բայց հոգս չէ. ինծի համար կարեւորը կեանքս չէ, այլ կ'ուզեմ ուրախութեամբ իր վախճանին հասցնել սկսած գործս, այն պաշտօնը որ Տէր Յիսուս տուաւ ինծի՝ Աստուծոյ շնորհքը աւետարանելու:

« Հիմա գիտեմ թէ այսուհետեւ պիտի չտեսնէք զիս: Եկայ ձեզի բոլորիդ, շրջեցայ եւ Աստուծոյ արքայութիւնը քարոզեցի, եւ ահաւասիկ կը յայտարարեմ այսօր թէ խիղճս հանդարտ է, որովհետեւ առանց քաշուելու

յայտնեցի ձեզի Աստուծոյ կամքը: Հսկեցէ՛ք ձեր անձերուն եւ ձեր ամբողջ հօտին, որուն տեսուչ կարգեց ձեզ Սուրբ Հոգին: Հովուեցէ՛ք Քրիստոսի եկեղեցին, զոր ան իր արեամբ գնեց: Որովհետեւ գիտեմ թէ իմ մեկնումէս վերջ յափշտակիչ գայլեր պիտի մտնեն ձեր մէջ, որոնք պիտի չխնայեն հօտին: Ձեր մէջէն եւս պիտի ելլեն

Հսկեցէ՛ք ձեր անձերուն եւ ձեր ամբողջ հօտին, որուն տեսուչ կարգեց ձեզ Սուրբ Հոգին:

շատեր որոնք սխալ բաներ պիտի ուսուցանեն, հաւատացեալները իրենց ետեւէն տանելու համար: Հետեւաբար արթուն

հիմա ձեզ կը յանձնեմ Աստուծոյ եւ իր շնորհի աւետարանին, որ կրնայ ձեզ հոգեւորապէս անեցնել եւ իր բոլոր սուրբերուն ժառանգակից դարձնել:

եղէք, յիշեցէ՛ք թէ ի՛նչպէս երեք տարի անդադար գիշեր ու ցերեկ արցունքով խրատեցի իւրաքանչիւրդ: Եւ հիմա ձեզ կը յանձնեմ Աստուծոյ եւ իր շնորհքի աւետարանին, որ կրնայ ձեզ հոգեւորապէս աճեցնել եւ իր բոլոր սուրբերուն ժառանգակից դարձնել: Ոեւէ մէկու աւրձաթին, ոսկիին կամ հագուստին չցանկացի: Դուք ինքնին գիտէք թէ իմ այս ձեռքերովս շահեցայ եւ հոգացի թէ՛ իմ եւ թէ՛ ընկերակիցներուս պէտքերը: Եւ կեանքիս օրինակով ցոյց տուի՝ թէ այսպէս պէտք է աշխատիլ եւ տկարներուն օգնել, յիշելով Տէր Յիսուսի այն խօսքը, թէ «Աւելի երջանկաբեր է տալը քան առնելը»:

Իր խօսքը վերջացնելէ ետք, Պօղոս բոլորին հետ ծունկի եկաւ եւ աղօթեց: Բոլորը սկսան լալ եւ Պօղոսի վզին փաթթուելով կը համբուրէին զինք: Կը մորմոքէին մանաւանդ անոր համար որ կ'ըսէր՝ թէ այլեւս զինք պիտի չտեսնեն: Ապա անոր ընկերակիցեացան մինչեւ նաւ:

**ԸՆԹԵՐՑՈՒՄ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՌԱՔԵԱԼԻ
ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԷՆ
(3.1-6)**

Տեսէք, թէ ի՛նչ պիտի սիրով Հայրը մեզ սիրեց, ուզելով որ Աստուծոյ որդիներ կոչուինք, եւ արդարեւ Աստուծոյ որդիներն ենք: Աշխարհը մեզ չի ճանչնար, որովհետեւ չճանչցաւ զայն:

Սիրելիներ, այժմ Աստուծոյ որդիներ ենք: Թէ ի՛նչպէս պիտի ըլլանք յետոյ՝ չենք գիտեր տակաւին. բայց գիտենք, թէ երբ Քրիստոս յայտնուի՝ իրեն նման պիտի ըլլանք, որովհետեւ զինք պիտի տեսնենք իր իսկութեան մէջ: Ով որ այս յոյսը ունի՝ ինքզինք կը մաքրէ, ինչպէս որ Քրիստոս ինք մաքուր է:

Ով որ կը մեղանչէ՝ Աստուծոյ օրէնքը կը խախտէ, եւ մեղքը ինքնին օրէնքին խախտումն է:

Ով որ կը մեղանչէ՝ Աստուծոյ օրէնքը կը խախտէ, եւ մեղքը ինքնին օրէնքին խախտումն է: Գիտէք թէ Քրիստոս յայտնուեցաւ մեր մեղքերը ջնջելու համար, եւ թէ իր մէջ մեղք չկայ: Ով որ Քրիստոսի միացած կը մնայ՝ չի մեղանչեր. իսկ ով որ կը մեղանչէ՝ զայն երբեք տեսած ու ճանչցած չէ:

մեղք չկայ: Ով որ Քրիստոսի միացած կը մնայ՝ չի մեղանչեր. իսկ ով որ կը մեղանչէ՝ զայն երբեք տեսած ու ճանչցած չէ:

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ
(9.39-10.10)**

Յիսուս ըսաւ. «Աշխարհ եկայ յայտնելու թէ որո՞նք են կոյրերը եւ որոնք՝ տեսնողները. որպէսզի կոյրերը տեսնեն եւ անոնք որ կը տեսնեն՝ կուրնան»:

«Աշխարհ եկայ յայտնելու թէ որո՞նք են կոյրերը եւ որոնք՝ տեսնողները. որպէսզի կոյրերը տեսնեն եւ անոնք որ կը տեսնեն՝ կուրնան»:

Փարիսեցիներէն ոմանք որոնք իր շուրջն էին, լսեցին ասիկա եւ հարցուցին. «Արդեօք մե՞նք ալ կոյր ենք»:

Յիսուս անոնց պատասխանեց. «Եթէ կոյր ըլլայիք, մեղք պիտի չունենայիք. բայց քանի կ'ըսէք թէ կը տեսնէք, կը նշանակէ թէ ձեր մեղաւոր ըլլալը կը հաստատէք:

«Հաստատ գիտցէք, ան որ ոչխարներուն փարախը դռնէն չի մտներ, այլ ուրիշ տեղէ կը մագլցի, անիկա գող է եւ աւազակ. իսկ ան որ դռնէն

կը մտնէ, անիկա ոչխարներուն հովիւն է: Դռնապանը դուռը կը բանայ անոր եւ ոչխարները իր ձայնին կը հետեւին: Իրենց անուններով կը կանչէ իր ոչխարները եւ դուրս կը տանի զանոնք: Եւ երբ իր ոչխարները դուրս կը հանէ, ի՛նք կ'առաջնորդէ, եւ ոչխարները կը հետեւին իրեն, որովհետեւ իր ձայնը կը ճանչնան: Օտարին չեն հետեւիր. ընդհակառակը, կը փախչին անկէ, որովհետեւ օտարներուն ձայնը չեն ճանչնար»:

«Հաստատ գիտցէք, թէ ե՛ս եմ ոչխարներուն դուռը»:

Յիսուս այս առակը խօսեցաւ անոնց, սակայն անոնք չհասկցան թէ ի՛նչ ըսել կ'ուզէր իրենց: Ուստի Յիսուս կրկին ըսաւ անոնց. «Հաստատ գիտցէք, թէ ե՛ս եմ ոչխարներուն դուռը: Բոլոր անոնք որոնք ինձմէ առաջ եկան, գող էին եւ աւազակ. բայց ոչխարները անոնց չհետեւեցան: Ես եմ դուռը. ով որ ինձմէ անցնելով ներս մտնէ՝ պիտի փրկուի. պիտի մտնէ եւ ելլէ եւ ճարակ գտնէ:

«Ես եկայ որպէսզի կեանք ունենան, եւ լեցուն կեանք ունենան»:

Գողը կու գայ միայն գողնալու, սպաննելու եւ փճացնելու համար: Ես եկայ որպէսզի կեանք ունենան, եւ լեցուն կեանք ունենան»:

**ՉՏԵՄՆՈՂԵՐՈՒՆ ԵՒ
ՏԵՄՆՈՂՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ**

«Դատաստան ընելու եկայ այս աշխարհը, որպէսզի չտեսնողները տեսնեն եւ անոնք որ կը տեսնեն՝ կուրնան», Յի 9.39:

ԳԱՌՆԻԿ Ք.Գ.

Ըստաւետարանին, որո՞նք են չտեսնողները, որ արժանի եղած են կամ կ'ըլլան կամ պիտի ըլլան տեսնելու, եւ որո՞նք են տեսնողները, որ զրկուած են կամ կը զրկուին կամ պիտի զրկուին տեսողութենէ:

Ե՞րբ է որ Յիսուս այս յայտարարութիւնը ըրած է:

Յովհաննէս աւետարանիչ ի ծնէ կոյրին բժշկութիւնը պատմելէ ետք, աւելցուցած է, թէ փարիսեցիներ զինք դուրս կը դնեն ժողովարանէն, անոր այն խօսքին վրայ թէ՛ «...անիկա իմ աչքերս բացաւ: Գիտենք որ

Աստուած մեղաւորներուն մտիկ չ'ընեն, բայց կը լսէ անոնց՝ որոնք աստուածապաշտ են եւ իր կամքը կը կատարեն: Աշխարհի սկիզբէն ի վեր լսուած բան չէ, որ մէկը ի ծնէ կոյրի մը աչքերը բացած ըլլայ: Եթէ այդ մարդը Աստուծոյ հետ չ'ըլլար, բան մըն ալ պիտի չ'կրնար ընել» (ՅՏ 9.30-33):

Յիսուս կը լսէ կուրուսեանէ բժշկեալին ժողովարանէն դուրս դրուելուն մասին, եւ զայն գտնելով, կը հարցնէ.

- Դուն կը հաւատա՞ս Աստուծոյ Որդիին:

Ան կը պատասխանէ.

- Տէ՛ր, ո՞վ է, որպէսզի հաւատամ անոր:

Յիսուս կ'ըսէ.

- Դուն արդէն տեսար զայն. քեզի հետ խօսողն է:

Մարդը անմիջապէս կը խոստովանի՝ «Կը հաւատամ, Տէ՛ր», եւ կ'երկրպագէ անոր:

Ահա այս պահուն է, որ Յիսուս կատարած է իր յայտարարութիւնը: Ուրեմն, անիկա սերտորէն կապուած է Յիսուսի՝ իբր Աստուծոյ Որդի խոստովանութեան: Այլ բացատրութեամբ մը՝ բժշկուածը՝ Յիսուսի աստուածորդիութիւնը կը տեսնէր: Իսկ անոնք որ տեսնողներ կը կարծէին իրենք զիրենք՝ չէին տեսներ. անոնք Ֆիզիքապէս կոյրեր չէին, սակայն չէին տեսներ:

Յստակորէն այս «տեսնել»ները Յիսուսը ճանչնալու մասին են: Սակայն ինչպէ՞ս կարելի է ճանչնալ զայն:

Ի՞նչ պէտք է տեսնելու համար:

Երկու բան.

- նախ լոյսի մէջ ըլլալ.

- եւ երկրորդ՝ տեսնելու կարողութիւն կամ շնորհք ունենալ:

Աւելորդ է ըսել, որ առանց լոյսի մէջ ըլլալու եւ առանց տեսնելու կարողութեան կամ շնորհքին՝ ոչ ոք կրնայ տեսնել:

Առաջին: Յովհաննէս աւետարանիչ Աստուած Բանին մասին գրած է. «Կեանքը անով սկիզբ առաւ: Եւ

կեանքը մարդոց համար լոյսն է՝ որ խաւարին մէջ կը փայլի... Բանն էր ճշմարիտ Լոյսը, որ աշխարհ գալով՝ կը լուսաւորէ ամբողջ մարդկութիւնը» (ՅՏ 1.4,

9): Ուրեմն, տեսնելու համար

Աստուծոյ Որդիին լոյսը պէտք է: Այդ լոյսն է, որ «կեանքին կ'առաջնորդէ» (ՅՏ 8.12):

Երկրորդ: Նկատի ունենալով, որ «կարողութիւն» բառը մարդկային յատկութիւն մը ցոյց կու տայ, իսկ շնորհք բառը ունի աւելի հոգեւոր նշանակութիւն մը, այսինքն՝ երկնատուր. եւ նկատի ունենալով, որ մեր նիւթը հոգեւոր բնոյթ ունի, այլ խօսքով՝ կը վերաբերի Աստուծոյ Որդիի ճանաչումին, ուստի ճիշդ կ'ըլլայ խօսիլ տեսնելու շնորհքի մասին՝ քան տեսնելու կարողութեան:

Յովհաննէս առաքեալ իր աւետարանի 3-րդ գլխուն մէջ խորունկ դրուագ մը ունի: Այնտեղ պատմուած է Նիկողեմոս անուն փարիսեցի իշխանաւորի մը՝ Յիսուսի հետ հանդիպման մասին: Խօսակցութեան սկիզբը Յիսուս ըսած է անոր. «Լաւ գիտցիր, որ եթէ մէկը վերստին չ'ծնի՝ չի կրնար տեսնել Աստուծոյ արքայութիւնը» (ՅՏ 3.3): Ուրեմն, տեսնելու համար մէկը պէտք է որ «վերստին ծնի»: Ի՞նչ ըսել է ասիկա: «Վերստին ծնիլ» կը նշանակէ՝ Ս. Հոգիէն ծնիլ (տե՛ս ՅՏ 3.7-8): Իսկ ի՞նչ կը նշանակէ Ս. Հոգիէն ծնիլ: Կը նշանակէ անով օծուած ըլլալ (Ա. ՅՏ 2.20, 27): Ան որ Ս. Հոգիով օծուած է «ամէն բան» գիտէ (նոյն, անդ) կամ կը տեսնէ ինքնութիւնը անոր՝ որուն միջոցով «ամէն ինչ» ստեղծուեցաւ (ՅՏ 1.2):

Թերեւս առարկուի, որ Նիկողեմոսի ուղղուած Յիսուսի խօսքին մէջ, նիւթը կը վերաբերի ո՛չ թէ Յիսուսի աստուածորդիութեան, այլ Աստուծոյ արքայութեան: Անշուշտ Աստուծոյ արքայութեան գաղափարը բարդ է: Սակայն այդ բարդութիւնը համառօտող պատկեր մըն է այն՝ որ Աստուծոյ արքայութիւնը ներկայացուցած է իբր Աստուծոյ եւ Գառնուկին տաճարը (Յյտ 21.22): Հետեւաբար, տեսնել Աստուծոյ արքայութիւնը՝ կը նշանակէ տեսնել Գառնուկը. եւ ան որ Գառնուկը կը տեսնէ՝ տեսած կ'ըլլայ անիկա, որ «Աստուած է եւ Հօրմէն անբաժան» (ՅՏ 1.18), նաեւ տեսած կ'ըլլայ անիկա, որուն մէջն է Հայրը եւ որ ինք մէջն է Հօր (ՅՏ 10.38): Այս միութեան շնորհիւ է, որ ան զինք ընդունողներուն կը ճանչցնէ զԱստուած:

Այն մարդը, կ'ըսէ Յովհաննէս առաքեալ, որ կը տեսնէ՝ Յիսուսի աստուածորդիութիւնը, կը ճանչնա՛յ զայն եւ Հայրը, ու հաղորդակի՛ց է անոր եւ Հօր:

... տեսնելու համար Աստուծոյ Որդիին լոյսը պէտք է:

Բայց ինչպէ՞ս մէկը կրնայ վստահ ըլլալ, թէ ինքնախաբէութեան մէջ չէ, այլ ի՛րապէս ունի այդ ճանաչողութիւնը եւ հաղորդակցութիւնը:

Ա՛ն կը ճանչնայ Որդին եւ Հայրը՝ որ աստուածային պատուիրանները կը գործադրէ: Անոնց գործադրութիւնը նշան է ճշմարիտ ճանաչողութեան: Այստեղ հարց մը կրնայ ծագիլ: Արդեօ՞ք ասիկա ըսել է, թէ ան որ պատուիրանները կը պահէ, ուրեմն իրապէս կը տեսնէ Որդին եւ անոր միջոցով կը ճանչնայ Հայրը: Ասիկա հին Օրէնքի գործադրութենէն ի՞նչ տարբերութիւն ունի:

Տարբերութիւնը կը կայանայ երկու այլ պայմաններու մէջ:

Առաջինը այն է, որ Քրիստոսի հետեւորդին սորվեցնողը Ս. Հոգին է: Ան կը սորվեցնէ «ամէն բան եւ կը սորվեցնէ ճշմարիտը, եւ ո՛չ թէ ստութիւնը» (Ա. Յճ 2.27):


Քրիստոսի հետեւորդին սորվեցնողը Ս. Հոգին է:

Երկրորդը այն է, որ պատուիրաններուն գործադրութիւնը պէտք է յայտնէ անհատին Քրիստոսի միացած ըլլալը: Եւ Քրիստոսի միացած ըլլալը՝ էապէս կը նշանակէ սէր ունենալ իր նմանին հանդէպ (Ա. Յճ 2.9-10): Սէրը յայտնութիւնն է մէկու մը լոյսի մէջ ըլլալուն (նոյն, անդ): Ու այս սէրը Հօրմէն կու գայ (Ա. Յճ 2.16):

Իսկ հաղորդակցութեա՞ն մասին:

Առաքեալը գրած է նաեւ. «եթէ ըսենք՝ Հաղորդակից ենք իրեն, եւ միւս կողմէ շարունակենք խաւարի մէջ ապրիլ, կը ստենք ահա եւ ճշմարտութիւնը չենք գործադրեր» (Ա. Յճ 1.6): Որո՞նք են խաւարի մէջ ապրողները: Անոնք են՝ որոնք աշխարհը կը սիրեն, աշխարհին յատուկ բաները կը սիրեն, այսինքն՝ մարմինի ցանկութիւնը, աչքին տեսածը ունենալու ցանկութիւնը եւ երկրաւոր ինչքերով հպարտանալը (Ա. Յճ 2.16):

Արդ, անոնք որ կը խոստովանին Յիսուսի Աստուծոյ Որդին ըլլալը եւ ըստ այնմ կ'ապրին, «չտեսնող» համարուած տեսնողներն են, իսկ անոնք որ չեն ընդունիր զայն իբր Աստուծոյ Որդին կամ կ'ուրանան, իրենք զիրենք «տեսնող» կարծողներն են, որ չեն տեսներ, կամ իրենք զիրենք «տեսնող» կարծելով՝ կը կուրնան, կ'ըսէ Աւետարանը:



ԱՄԵՆ ԻՆՉ ԶԳԵՂ՝ ՅԻՍՈՒՍԻ ՀԵՏԵՒԵԼՈՒ ՀԱՄԱՐ (18-22):

«Երբ Յիսուս մեծ բազմութիւն մը տեսաւ իր շուրջ, հրամայեց իր աշակերտներուն, որ լինին միւս կողմը երթան: Օրէնքի ուսուցիչ մը մօտեցաւ՝ ըսաւ իրեն.

- Վարդապետ, ուր որ երթաս՝ ետեւէդ պիտի գամ: Յիսուս պատասխանեց.
- Աղուէները որք ունին, երկինքի թռչունները՝ բոյն, սակայն Մարդու Որդին գլուխը հանգչեցնելիք տեղ մը չունի:
- Ուրիշ մը, որ իր աշակերտներէն մէկն էր, ըսաւ իրեն.
- Տէ՛ր, թոյլ տուր որ նախ երթամ եւ թաղեմ հայրս: Յիսուս պատասխանեց.
- Դուն հետեւէ՛ ինձի, եւ ձգէ որ մեռելները թաղեն իրենց մեռելները»:

Այս հատուածը երկու տարբեր անձերու՝ երկու տարբեր պատասխաններ ունի: Մէկը Օրէնքի ուսուցիչ մըն է, երկրորդը աշակերտ մը:

Երբ Օրէնքի ուսուցիչը կը խօսի Յիսուսի հետ, անոր կը դիմէ «վարդապետ» ըսելով:

Մատթէոսի աւետարանին մէջ այս տիտղոսը Յիսուսի տրուած է անոնց կողմէ՝ որոնք իրեն հակառակորդներ էին: Սակայն այստեղ մեզի ներկայացուած Օրէնքի ուսուցիչին մասին չէ ըսուած, թէ Յիսուսի հակառակորդ մըն էր: Գուցէ

նախապէս էր, սակայն թերեւս Յիսուսի ուսուցումները սկսած էին իր սրտին խօսիլ, ուստի եկած էր անոր մօտ եւ յայտարարած՝ «Վարդապետ, ուր որ երթաս՝ ետեւէդ պիտի գամ»:

Գալով աշակերտի խնդրանքին. ուշագրաւ է, որ Մատթէոսի աւետարանին մէջ, Յիսուսի հետեւորդները գինք «Տէր» կը կոչեն: Այս կոչումը կը նշանակէ, թէ իր սկիզբէն գինք կ'ընդունէին ո՛չ թէ իբր ուսուցիչ մը կամ վարդապետ մը, այլ մէկը՝ որ աւելի վեր է ոեւէ ուսուցիչէ կամ վարդապետէ: Նոյնիսկ եթէ «Տէր» կոչումը տակաւին Յիսուսի աստուածութեան խոստովանութիւն մը չէր, սակայն գոնէ տիտղոս մը էր, որ աւելին կը թելադրէ քան պարզ ուսուցանող մը: Առնուազն անիկա կը նշանակէր, թէ Յիսուս Աստուծոյ կողմէ զրկուած էր, եւ իբր այդպիսին՝ իրենց անձերուն տէրն էր:

Աշակերտին խնդրանքը բառացիօրէ՛ն պէտք է հասկնալ, թէ ոչ:

Գիտենք որ արեւելքի մէջ, հինէն եկող սովորութեամբ մը՝ մեռելներու հանգէպ յարգանքը շատ զօրաւոր է: Մանաւանդ երբ հեռու տուններէն ընտանիքէն ներս մեռեալ մը կայ՝ ընտանիքին անդամները տունէն դուրս չեն ելլեր: Ոեւէ մէկուն մօտ չեն երթար: Հետեւաբար կարելի չէ երեւակայել, թէ այս աշակերտին հայրը իսկապէս մեռած էր, եւ ինքը սգաւոր տունը ձգելով՝ եկած էր Յիսուսի մօտ, որպէսզի անկէ խնդրէր տուն երթալ եւ հօր թաղման մասնակցիլ:

Կը մտածենք, որ արդեօք ուրի՞շ իմաստ մը կայ այս խօսքին ետին:

Յիսուսի պատասխանը եւս անհասկնալի է: Կ'ըսէ. «ձգէ որ մեռելները թաղեն իրենց մեռելները»: Բայց մեռելները ի՞նչպէս կրնան թաղել իրենց մեռելները: Եթէ սովորական հասկացողութեամբ առնենք ըսուածը՝ չենք կրնար հասկնալ ըսուածը: Իսկ եթէ զայն տեսնենք իբր փոխաբերութիւն մը, այն ատեն կը դիւրանայ զայն հասկնալու մեր ճիգը եւ կրնանք ճշգրիտ իմաստը գտնել:

Արդ, եկէ՛ք այս երկու հարցումները ընենք.

- Յիսուս երբ Օրէնքի ուսուցիչին պատասխանեց՝ «Աղուէսները որջ ունին, երկինքի թռչունները՝ բոյն, սակայն Մարդու Որդին գլուխը հանգչեցնելիք տեղ մը չունի»՝ ի՞նչ ըսել ուզեց:

Ճիշդ է, որ Յիսուս աշխարհի վրայ տեղ մը ունենալու պէտք չունէր, որովհետեւ ամբողջ աշխարհը իրն էր: Բայց միւս կողմէ այնքան ատեն որ երկրի վրայ իր առաքելութիւնը կը կատարէր, իր գլուխը հանգչեցնելու տեղի մը պէտք ունէր: Ուրեմն, դարձեալ հարցումը. Յիսուս իր գլուխը հանգչեցնելու տեղ մը ունէ՞ր թէ չունէր:

Անշուշտ հօրենական տուն մը ունէր, որ Նազարէթ քաղաքին մէջն էր: Սակայն իր առաքելութեան սկսելէն ետքը՝ եկաւ եւ հաստատուեցաւ Կափառնաում քաղաքը: Կափառնաումի մէջ ալ տեղ մը ունեցաւ: Իր առաքելութեան ընթացքին շրջելով հանդերձ՝ անտեղ չէր. ամէն տեղ ալ գինք ընդունողներ կային: Կարելի է նոյնիսկ ըսել, որ ոչ թէ միայն կ'ընդունուէր, այլ փառաւոր կերպով կ'ընդունուէր: Ամէն տեղ ալ իրենի պատիւ հիւրասիրութիւններ կ'ըլլային: Հետեւաբար, ինչո՞ւ Յիսուս ըսաւ, թէ իր գլուխը հանգչեցնելիք տեղ մը չունէր:

Պարզ է, որ ըսուածը բառացիօրէն պէտք չէ առնել: Կայ ճշմարտութիւն մը, որ Յիսուս կ'ուզէ որ տեսնենք: Երբեմն երեւոյթները տարբեր են, խորքը տարբեր է: Մարդիկ տարբեր տեղեր գինք կ'ընդունէին: Փարիսեցիներ ալ գինք կ'ընդունէին: Բայց այդ յարգանքը իրակա՞ն էր, թէ ձեւական յարգանք էր: Այդ ընդունելութեանց ետին՝ մէկ կողմէ հրաւիրողներուն փառասիրութիւնը կար, միւս կողմէ ալ հետաքրքրութիւնը որ Յիսուսի մասին նոր բաներ իմանան: Ո՛չ թէ բան մը սորվելու համար, այլ ժխտական ցանկութեամբ մը, այսինքն՝ որպէսզի նիւթ մը աւելի ունենան իր մասին չարախօսելու եւ դատապարտելու:

Այս իրողութիւնն է, որ Յովհաննէս ակետարանիչ արտայայտած է բանաձեւով մը: Ան իր ակետարանի առաջին գլխուն սկիզբը սա հաստատումը արձանագրած է. «Իրեններուն եկաւ եւ իրենները զինք չընդունեցին» (ՅՏ 1.11): Իրենները առհասարակ զինք չընդունեցին: Քիչ եղան զինք ընդունողները: Շատեր ըստ Սերմնացանի առակին՝ մեծ խանդավառութեամբ դիմաւորեցին եւ ընդունեցին զինք, բայց երբ ճակատագրական վայրկեաններ մօտեցան, մէկ առ մէկ հեռացան անոնք: Քանի՞ հոգի իրեն հաւատարիմ մնաց: Իր յարութենէն ետքը՝ կարծէք զերոյէն կը սկսի իրեն աշակերտութիւնը: Յետ յարութեան, նախ առաքելները կը վերադառնան եւ հաւատքին կը կառչին, յետոյ անոնց կողքին ուրիշներ: Իսկ Պենտեկոստէի օրը կը տեսնենք, որ Քրիստոսի աշակերտներութիւր արագօրէն կը սկսի մեծնալ:

Գանք երկրորդ հարցին. «ձգէ որ մեռելները թաղեն իրենց մեռելները»: Ինչպէ՞ս հասկնանք այս խօսքը: Արդեօ՞ք ըսել կ'ուզէ, թէ մենք պէտք չէ զբաղինք Փրզիքապէս կամ հոգեւորապէս մեռած աշխարհով:

Բայց մենք գիտենք, որ Յիսուս ինք զբաղեցաւ մեռելներով. թէ՛ ուզեց Փրզիքապէս մեռածներուն կեանք տալ, եւ թէ՛ հոգեւորապէս մեռածներուն կեանք տալ: Իր ամբողջ առաքելութեան նպատակն էր մեռեալ բնութեան կեանք տալ: Առաւել այս առիթով կարելի է յիշել, որ Յիսուս ուզեց որ մենք պատուենք մեր հայրերն ու մայրերը, հետեւաբար երբեք պէտք չէ հասկնալ իր պատասխանը իբր անարգանք ծնողներուն: Յիսուս անկարելի է, որ ըսած ըլլար, թէ մի՛ երթար մասնակցելու հօրդ թաղման: Աստուած կամ Յիսուս յարգանքի պակաս չէ, որ կը սորվեցնեն մեզի:

Իր ամբողջ առաքելութեան նպատակն էր մեռեալ բնութեան կեանք տալ:

Յիսուս ըսել ուզած էր, որ իր աշակերտը

չզբաղէր մարդս մեռցնող կամ մահուան տանող բաներով: Անոր կը պատուիրէր, որ ան մահուամբ զբաղումը ձգէր հոգեւորապէս մեռածներուն:

Յիսուսի եկող աշակերտը պէտք է զբաղի այն բաներով, որոնք կեանքի պատճառ կ'ըլլան: Մարդկային կեանքին մէջ զբաղումներ կան, որոնք մեռելական են, այսինքն՝ դէպի մահ կ'առաջնորդեն: Յիսուսի պատուէրն է՝ զբաղիլ կեանքի առաջնորդող եւ կեանքի պատճառ գործերով:

Յիսուսի պատուէրն է՝ զբաղիլ կեանքի առաջնորդող եւ կեանքի պատճառ գործերով:

Ց-րդ գլխուն սկիզբէն տրուած երեք դրուագները՝ երեք ճշմարտութիւններ կը բերեն մեզի:

Առաջին դրուագը՝ Հարիւրապետին ծառային բժշկութիւնը՝ մեզի կը սորվեցնէ մէկ բան.

երբեմն մենք կը կարծենք, որ բաւարար չափով հաւատք ունինք, բայց տարօրինակ կերպով, բոլորիս մէջ ալ երբ հաւատքը դրսեւորելու, գայն գործի վերածելու վայրկեանը գայ, յաճախ վախ մը, վարանում մը կը մտնէ մեր մէջ: Ո՞վ մեզմէ Յիսուսի ծանօթութիւնը չունի: Ո՞վ մեզմէ Յիսուսի հրաշալի գործերը չի գիտեր: Հակառակ մեր ծանօթութեան, տակաւին մենք կը վախնանք, կը վարանինք իրեն հետեւելու: Նոյնն էր պարագան եբրայեցիներուն, որոնք հակառակ իրենց կրօնական հարուստ փորձառութեան եւ ծանօթութեան, տակաւին հաւատքը զօրեղ կերպով չէր խօսեր իրենց մէջ, չէր արտայայտուեր այն որոշակի վստահութեամբ, որ հարիւրապետինը եղաւ:

Յիսուսի խօսքը («այսպիսի հաւատք ունեցող մը չգտայ») հիմա եւս մեր ականջներուն մէջ պէտք է հնչէ: Մենք որ Յիսուսի ժողովուրդն ենք եւ հաւատքի բազմաթիւ ախոյեաններու օրինակները ունինք: Արդեօք մենք հաւատքի այն դրսեւորումը կրնա՞նք ունենալ, ինչպիսին ունեցաւ հարիւրապետը: Ամէն օր, ամէն

վայրկեան հաւատքը գործի վերածելու հարկադրանքին դիմաց չենք գտնուիր: Սակայն անկասկած մեր կեանքին մէջ պահ կու գայ, երբ Աստուած մեզմէ կը պահանջէ գործով ցոյց տալ մեր հաւատքը:

Մարդկային մեր կեանքին յատուկ է, երբ կու գայ բուն իսկ հաւատքը արտայայտելու վայրկեանը՝ փոխանակ վստահութեան պատասխանը տալու՝ վախը եւ վարանումները կը շատնան: Եւ մենք յաճախ կ'ասկածով կը մօտենանք: Քիչեր կան որ այդ պատասխանը վճռականօրէն եւ վերջնականօրէն կրնան տալ: Եւ նոյնիսկ, վստահ եղէք, անոնք ալ իրենց վախի եւ վարանումի վայրկեանները ունին: Յիշեցէ՛ք, առաքեալներուն մէջ ամենէն անյողդողդ նկարագիր ունեցողներէն՝ Պետրոսի օրինակը, թէ ինչպէ՛ս անարգօրէն եւ երեք անգամ ուրացաւ իր Տէրը, ըսելով. «Կ'երդնում որ չեմ ճանչնար այդ մարդը»: Ամէնքս ալ այնպիսի պահերէ կրնանք անցնիլ: Բայց Աստուած ասպարէզ կը կարդայ մեզի, մեր կոչումը կ'ուզէ մեզի յիշեցնել, որպէսզի երբ փորձութեան ժամը գայ, հաւատքի վստահութեան պատասխանը տանք:

Պետրոսի զոքանչին դրուագը հետաքրքրական բան մը ունի:

Ան բուժուելէ անմիջապէս ետքը՝ գործի կ'անցնի: Կը սկսի Յիսուսի սպասարկել: Կարծէք աւետարանիչը դիտմամբ մեր ուշադրութեան առարկայ դարձուցած է այդ սպասարկութիւնը:

Մենք ամէնքս ալ Աստուծոյ պարգեւները ունինք: Աստուած իր պարգեւները մեզի տուած է եւ կու տայ, որպէսզի մեր անձերը իրեն ծառայելու մէջ դնենք:

Մարդու կեանքին մէջ մեծագոյն հիւանդութիւնը կամ ախտը՝ մեղքն է: Եւ Աստուած ամէն օր մեզի թողութիւն կու տայ, երբ մենք կը դառնանք եւ ներողութիւն կը խնդրենք իրմէ: Աստուած մեզ կ'առողջացնէ մեր մեղքէն: Սակայն առողջանալէ ետքը՝ մենք կը ծառայենք Աստուծոյ: Այդ ծառայութիւնն է, որ մեզի կը յիշեցնէ աւետարանը:

Իսկ երրորդ դրուագը իր երկու պատասխաններով՝ մէկ բան ցոյց կու տայ: Մենք ալ Աստուծոյ Որդիին պէս յաճախ կը զգանք, որ այս աշխարհէն չենք: Սխալ չհասկնաք: Այս աշխարհի կեանքը կը բաժնենք: Բայց երբեմն, մեր հաւատքին պատճառով եւ մեր ունեցած որոշ հասկացողութիւններուն պատճառով, ընկերութեան մէջ հակառակութիւններու կը հանդիպինք: Երբեմն մարդիկ մեզ չեն ընդունիր կամ կը մերժեն, որովհետեւ այս աշխարհի մէջ ըլլալով հանդերձ, չենք բաժներ աշխարհի բաները: Մեզի քաղաքացիութիւն մը տրուած է, եւ մեր քաղաքացիութիւնը երկնային է եւ ոչ թէ աշխարհային: Այս իսկ պատճառով մենք կրնանք դժուարութիւններու հանդիպիլ, մեր դիմաց անհասկացողութիւններ գտնել: Սակայն Քրիստոսի աշակերտողը այդ վարմունքները դիմակալելու պատրաստ պէտք է ըլլայ: Ան պէտք է գիտնայ, որ այս աշխարհը մեռած է իրեն համար, ինչպէս ինք մեռած է աշխարհին համար (Գղ 6.14): Ասիկա չի նշանակեր աշխարհը մերժել: Քրիստոնեային կեցուածքը՝ երբեք աշխարհը մերժել պէտք չէ ըլլայ: Ան պէտք է աշխարհի մէջ հոգեւորապէս մեռեալներուն համար կենդանութեան առաջնորդող լոյս ըլլայ: Ասիկա է Քրիստոսի աշակերտողին կոչումը: Ասիկա է Քրիստոսի մատուցող ճշմարիտ ծառայութիւնը, որուն համար Աստուծոյ իր օրհնութիւնը կը բաշխէ առատօրէն:

Մեզի
ֆաղափացիու-
թիւն մը
տրուած
է, եւ մեր
ֆաղափացիու-
թիւնը
երկնային
է եւ ոչ թէ
աշխարհային:

Ան
(Քրիստոնեան)
պէտք է
աշխարհի մէջ
հոգեւորապէս
մեռեալներուն
համար
կենդանութեան
առաջնորդող
լոյս ըլլայ:

(Շարունակելի 34)

ԵՐԵՄՆՈՐԵԱԿ

Հրագրաբար, 21 Մայրս 2009

ՀԱՄԱՐԱԶՈՒՄ

11.00 Ս. Պատարագ

Ուրբաթ, 22 Մայրս 2009

10.00 Հոգեգալստեան աղօթածողով՝
Քոյրերու ժողով

Հաքաթ, 23 Մայրս 2009

10.00 Հոգեգալստեան աղօթածողով՝
Քոյրերու ժողով

Կրոաւր, 24 Մայրս 2009

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ

Երպուրաբար, 25 Մայրս 2009

10.00 Հոգեգալստեան աղօթածողով՝
Քոյրերու ժողով

Երեքաբար, 26 Մայրս 2009

10.00 Հոգեգալստեան աղօթածողով՝
Քոյրերու ժողով

19.00 Ֆիլմի ցուցադրութիւն՝
“The Exorcism of Emily Rose“

Չորեքաբար, 27 Մայրս 2009

10.00 Հոգեգալստեան աղօթածողով՝
Քոյրերու ժողով

Հրագրաբար, 28 Մայրս 2009

11.00 Հոգեգալստեան աղօթածողով՝
Քոյրերու ժողով

Ուրբաթ, 29 Մայրս 2009

10.00 Հոգեգալստեան աղօթածողով՝
Քոյրերու ժողով

Հաքաթ, 30 Մայրս 2009

10.00 Հոգեգալստեան աղօթածողով՝
Քոյրերու ժողով

Կրոաւր, 31 Մայրս 2009

ՀՈԳԵԳԱԼՈՒՄ

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ

Հրագրաբար, 04 Յուլիս 2009

11.00 Աղօթածողով՝
Քոյրերու ժողով

Կրոաւր, 07 Յուլիս 2009

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ

Երեքաբար, 09 Յուլիս 2009

19.00 Երիտասարդական՝
ներկայացում եւ գրոյց.
“Երգմանցուցութիւն (Exorcism)“

Հրագրաբար, 11 Յուլիս 2009

11.00 Աղօթածողով՝
Քոյրերու ժողով

Կրոաւր, 14 Յուլիս 2009

ՏՕՍ ՍՈՒՐ ՔՁԱՐԱԾԱՐ

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ



ՍՏԱՆԱԼՈՒ ԿԱՄ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ԵԿԵՂԵՅՈՅՍ

ՅԻՍԱՆԱԵՎ ՊԱՏՈՒԹԵԱՆ

ԵՒ

յՈՐԵԼԵՆԱԿԱՆ ՀՈԳԵՒՈՐ ՀԱՄԵՐԳԻ

ՏԵՍԱՍԱԼԻԿԱՆԵՐՆ (DVD)

ՀԱՃԵՅԷՔ ԴԻՄԵԼ ԴԻՒՆԱՏՈՒՄ:

ՅԱԼԵԼԵԱԼ տեղեկութեան համար

հեռաձայնել դիւանատուն՝

514 331 5445 x202

ՀՈԳԵՀԱՆԳԱՏԵԱՆ ՁԵՐ
ԱՌՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԵՐՆ ԵՒ ԱՊՈՐՈՐ
ԿԱՏԱՐԵՅԷՔ ԿԱՊՈՒԵԼՈՎ
ԵԿԵՂԵՅՈՅ ԴԻՒՆԱՏՈՒՄ

ՍՈՅՆ ԹԵՐԹԻԿՆ Ե-ԱՃԱԿՈՎ ԱՏԱՆԱԼՈՒ
ՀԱՄԱՐ ՁԵՐ Ե-ՀԱՍՅԷՆ ՈՐԴՈՒՐԿԵՅԷՔ
eglise58@sourphagop.com-րս

ՀԻՒՆԱԴՆԵՐՈՒ ԱՅԵԼՈՒԹԻՒՄ
Բարեհաճեցէք հեռաձայնել Արժ. Տ.
Գառնիկ Քինյ. Գոյունեանի.
514 331 5445 x203 կամ 514 909 5203

ՆԱԽՈՐԴ ԹԻՒԵՐՆ ԿՐՆԱՔ ԳՏԱԵԼ
www.sourphagop.org/lradou
ԿԱՂԲԷՁԻՆ ՎՐԱՂ